ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ
(1873—1958)

Ութսունհինգամյա հասակում, 1958 թվականի հուլիսի 22-ին, երկարատև հիվանդությունից հետո, ի Տեր հանգյալ Կրասնոդար քաղաքի ծխատեր արժանահիշատակ Տ. Վահան ավագ քահանա Մկրտչյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1873 թվականին, Վանի շրջանի Մխելներ գյուղում, արհեստավորի ընտանիքում և սկզբնական կրթությունն ստացել՝ նախ ծննդավայրի ծխական և ապա Վանի Խրիմյան Հայրիկի անվան Վարագա վանքի դպրոցում 1889—1896 թվականներին։ Երկար տարիներ պարապել է ուսուցչությամբ։ 1909 թվականին քահանա է ձեռնադրվել Աղթամարի վանքում իր դյուղի վրա և քահանայագործել է մինչև 1914 թվականը։

Վանի գաղթից հետո հաստատվում է Թիֆլիս և ապա Կրասնոդար, որտեղ քահանայագործում է մինչև իր մահը։

Հանգուցյալը համեստ, պատվավոր և պարտաճանաչ հոգևորական էր, նվիրված իր գործին և իր ժողովրդին։

Հանգուցյալը իր բազմամյա պաշտոնավարության ընթացքում պարգևատրվել և դնահատվել է իր բարվոք ծառայության համար։ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, վերջին տարիներին հանգուցյալ Տ. Վահան քահանան իր ծերության պատճառով հանգստյան թոշակ էր ստանում։

Հավիտենական հանգի՞ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
(1901—1958)

Հոկտեմբերի 13-ին Կրասնոդար քաղաքում վաճխանվեց Տ. Գարեգին քահանա Խաչատրյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1901 թվականին Կիրովաբադում (Գանձակում)։ Ստացել էր միջնակարգ և բարձրագույն կրթություն և երկար տարիներ զբաղվել էր ուսուցչությամբ, միշտ հաճախելով Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։

1953 թվականին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի ձեռամբ քահանա է ձեռնադրվում, և մի որոշ ժամանակ պաշտոնավարում է Կիրովաբադում և ապա Կրասնոդարում, մինչև իր հանկարծամահ լինելը։

Հանգուցյալը զարգացած, գործունյա և հավատավոր եկեղեցական էր, պարգևատրված ծաղկյա փիլոնով և քահանայական լանջախաչով, իր բարվոք ծառայության համար։

Հավիտենական հանգի՞ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։